Հասցե՝ գյուղ Լեռնուտ
Էլ. հասցե՝ lernutshirak@gmail.com

«Անդրանիկ Հարությունյան» ԱՁ
Հասցե՝ ք.Գյումրի Կ. Դեմիրճյան 63
Էլ. Փոստ՝ andranik0222@yandex.ru

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Շիրակի մարզի «Լեռնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Անդրանիկ Հարությունյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 06.08.2024թ. կնքված ՇՄԼՄԴ-ՄԱԱՊՁԲ 2024/2-սն» *ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ միակողմանի լուծելու վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզի «Լեռնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի որոշումը:*

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ «Անդրանիկ Հարությունյան» ԱՁ-ն) պարտավորվում է ՀՀ Շիրակի մարզի «Լեռնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սննդամթերքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել կնքված Պայմնագրի ուժի մեջ մտնելուց մինչև դեկտեմբերի 25-ը:

ԱՁ-ի հանկարծակի մահվան պատճառով տեղի է ունեցել ֆորս-մաժորային իրավիճակ:

Անդրանիկ Հարությունյան ԱՁ-ն հանկարծամահ է եղել, ներկայացվել է մահվան վկայական:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը չի կարող իրականացնել պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարումը, ուստի ՀՀ Շիրակի մարզի « Լեռնուտի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ը՝ հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, միակողմանի լուծարվում է 06.08.2024թ. Ընկերության հետ կնքված ՇՄԼՄԴ-ՄԱԱՊՁԲ 2024/2-սն»*ծածկագրերով ապրանքների մատակարարման պայմանագիրը՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:*

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն ծանուցմամը Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն հրապարակվում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Դպրոցի տնօրեն՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ